



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

№ 235-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 167 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի բնակիչ Արայիկ Ֆիրյանի 2023 թվականի օգոստոսի 21-ի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2003 թվականի մարտի 12-ի «Չարենցավան համայնքի բնակիչ Լիդիա Պավելի Պետրոսյանի չորս անձից բաղկացած ընտանիքին ընդհանուր համարեղ սեփականության իրավունքով բնակարան հարկացնելու մասին» թիվ 167 որոշման մեջ «Փիրյան» բառը փոխարինել «Ֆիրյան» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2023 թվականի օգոստոսի 22
ք. Հրազդան



Ա. ԹԱՀԱԿՅԱՆ